ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿ. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՔ

Կապիկի ծաղիկը վարակիչ հիվանդություն է, որն առաջանում է կապիկի ծաղիկի վիրուսից: Յուրաքանչյուր ոք, ով սերտ, անձնական կապի մեջ է եղել կապիկի ծաղիկով հիվանդ անձի հետ, վտանգի տակ է:

ԻՆՉՊԵ՞Ս Է ՏԱՐԱԾՎՈՒՄ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿԸ

Հայտնի է, որ կապիկի ծաղիկը տարածվում է սերտ, մտերմիկ և/կամ երկարատև շփման միջոցով, ներառյալ՝

- Կապիկի ծաղիկով անձի ցանի, վերքի կեղևի կամ մարմնի հեղուկների հետ մաշկից մաշկ անմիջական շփում:
- Կապիկի ծաղիկով անձի կողմից օգտագործված առարկաների և գործվածքների հետ շփում
- Կապիկի ծաղիկով անձի շնչառական արտազատուկների հետ շփում

Դա կարող է առաջանալ՝

- Սեռական հարաբերությունից և այլ մտերմիկ շփումներից, ներառյալ՝ համբուրվելը, մերսումը, գրկախառնությունը
- Նույն գործվածքների և իրերի (օրինակ՝ հագուստ, անկողնային պարագաներ, սրբիչներ, սեռական բնույթի խաղալիքներ) օգտագործումից, երբ չեն մաքրվել
- Երկարատև, սերտ, դեմառդեմ շփումից, օրինակ՝ շատ մոտ տարածության վրա դեմառդեմ զրույց երկար ժամանակով (մոտ 3 ժամ կամ ավելի):
- Կապիկի ծաղիկով անձի տանը բնակվելու, նույն անկողինն օգտագործելու կամ կապիկի ծաղկով հիվանդին խնամելու հետևանքով:

Կապիկի ծաղիկ ունեցող անձը կարող է վարակել ուրիշներին՝ ախտանիշների առաջանալու սկզբից մինչև այն պահը, երբ ցանը ապաքինվել է, կեղևը թափվել է և մաշկի նոր շերտ է առաջացել: Դա սովորաբար տևում է 2-ից 4 շաբաթ:

Կապիկի ծաղիկ ունեցող հղի անձը կարող է վիրուսը փոխանցել պտղին ընկերքի միջոցով:

Կապիկի ծաղիկը ՉԻ տարածվում այն ունեցող անձի հետ սովորական (կարճատև) զրույցի կամ նրա կողքով քայլելու միջոցով:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿԻ ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ

ՀԻՄՆԱԿԱՆ ԱԽՏԱՆԻՇՆԵՐ

ՑԱՆ

Ցանը կարող է՝

- Նման լինել ուռուցքների, պզուկների, բշտիկների, խոցերի կամ կեղևակալած մաշկի
- Գտնվել մարմնի ցանկացած հատվածում, ներառյալ՝ սեռական օրգանները, հետանցքը, բերանը, ձեռքերը և դեմքը
- Լինել միայն մեկ հատվածում կամ տարածվել մարմնով մեկ
- Քոր գալ կամ ցավոտ լինել (հատկապես բերանում կամ հետանցքում)

ԱՅԼ ԱԽՏԱՆԻՇՆԵՐ

ԳՐԻՊԱՆՄԱՆ ԱԽՏԱՆԻՇՆԵՐ

Ջերմ/դող

Ուժասպառություն, մկանային ցավեր և գլխացավ

Ուռած ավշային հանգույցներ

- Գրիպանման ախտանիշները կարող են երևան գալ ցանի առաջանալուց 1-4 օր առաջ կամ հետո
- Ոչ բոլորի մոտ են առաջանում այս ախտանիշները

Ախտանիշները սովորաբար հայտնվում են վարակի հետ շփումից 5-21 օր անց

ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵՔ ՁԵՐ ԲԺՇԿԻ ՀԵՏ՝

Եթե ձեր մարմնի որևէ մասում ունեք նոր, անբացատրելի, ցան կամ ախտահարում: Սա հատկապես կարևոր է, եթե շփվել եք որևէ անձի հետ, ով ունի կապիկի ծաղիկ կամ կասկածվում է, որ ունի այն:

ԵԹԵ ԲԺԻՇԿ ՉՈՒՆԵՔ՝

- Զանգահարեք Հանրային Առողջության հեռախոսազանգերի կենտրոն 1-833-540-0473 համարով (ամեն օր՝առավոտյան 8-ից երեկոյան 8:30-ը) կամ
- Այցելեք մոտակա Հանրային Առողջության սեռական առողջության կլինիկա

Սկանավորեք QR ծածկագիրը՝ որևէ վայր գտնելու համար

For more information on Monkeypox, visit:

ph.lacounty.gov/Monkeypox 8/26/2022 (Armenian)

County of Los Angeles Public Health